Նորամուտ տարվա հոգևոր և ազգային տոների առաջնեկ Սուրբ Ծննդի և Մկրտության տոնակատարությունը վիրահայոց թեմում մեկնարկեց Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում թեմի հոգևոր առաջնորդ գերաշնորհ տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի մատուցած ճրագալույցի Սուրբ Պատարագով, որին ներկա էին տեղի հայ համայնքի ղեկավար այրերը, մտավորականության ներկայացուցիչներ, պետական և հասարակական գործիչներ, հավատացյալներ:

Վիրահայոց հոգևոր թեմի առաջնորդը Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով:

photo by Yuri Akulyan

[illegible]